Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
օգոստոսի 13-ի N 935 - Ա որոշման

Ն Ե Ր Դ Ր Ո Ւ Մ Ա Յ Ի Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՆՏԱԱ ԻՆՎԵՍՏՄԵՆՏ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

«ՆՏԱԱ ԻՆՎԵՍՏՄԵՆՏ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը նպատակ ունի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի (այսուհետ՝ համալիր) ձեռքբերման և հարակից տարածքի կառուցապատման միջոցով իրականացնել խոշոր ներդրումային ծրագիր (այսուհետ՝ ծրագիր), որի ընդհանուր նկարագիրը հետևյալն է՝

1. Պահպանելով մարզամշակութային համալիրի օգտագործման ուղղվածությունը՝ վերանորոգել համալիրի շենքը, որտեղ կկազմակերպվեն համերգային, սպորտային և պետական նշանակության միջոցառումներ և համաժողովներ:

2. Համալիրի զբաղեցրած հողամասին հարող 8.547 հա տարածքում իրականացնել կառուցապատում՝ հյուրանոցային համալիրներ կառուցելու նպատակով, որոնք կներառեն ռեստորաններ, խանութներ, խաղատներ և ժամանցի այլ վայրեր, ինչպես նաև փակ ջրային ատրակցիոն:

Հյուրանոցներն ունենալու են 350-ից ավելի ընտանեկան ոճի սենյակ: Փակ ջրային ատրակցիոնը ունենալու է ավելի քան 18.000 քառ. մետր մակերես, աշխատելու է 12 ամիս:

Ծրագիրն իրականացվելու է առավելագույնը 4 տարվա ընթացքում:

Ներդրումների չափը չի կարող պակաս լինել 100.000.000 ԱՄՆ-ի դոլարից:

Ծրագիրը կապահովի առնվազն 250 նոր աշխատատեղ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ